ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ

0010, ք.Երևան, Վ.Սարգսյան 5
Հեռ. (+37410) 511-703

ՎԴ-1-Ե-10877
13 սեպտեմբերի 2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՌԵԿՏՈՐ
ՊԱՐՈՆ ՍԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

ՀՀ Վճռաբեկ դատարանի անունից ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ, ՀՀ Արդարադատության ակադեմիայի բոլոր աշխատակիցներին՝ Ակադեմիայի հիմնադրման 10-ամյակի կապակցությամբ:

Կազմավորման պահից ի վեր՝ ՀՀ Արդարադատության ակադեմիան ստանձնել է ինչպես ապագա, այնպես էլ գործող դատավորների, դատախազների և քննիչների մասնագիտական պատրաստման, նրանց գիտելիքների և հմտությունների հետևողական կատարելագործման չափազանց բարդ և պատասխանատու առաքելությունը:

Արդարադատության որակը մեծապես կախված է դատական համակարգի և իրավապահ մարմինների ներկայացուցիչների մասնագիտական որակներից:

Հանրության բացարձակ վստահությունը վայելող դատական և իրավապահ համակարգ ունենալու համար, այդ կառույցները պետք է համալրվեն անհրաժեշտ մասնագիտական պատրաստվածություն ունեցող, բարձր պատասխանատվությամբ օժտված և էթիկայի չափանիշներին խստագույնս համապատասխանող կադրերով:

Ամենօրյա նվիրված աշխատանքի շնորհիվ ՀՀ Արդարադատության ակադեմիային հաջողվել է ապահովել որակական բարձր ցուցանիշներին համապատասխանող կադրերի պատրաստման բարձր նշաձող:

ՀՀ Արդարադատության ակադեմիայի՝ որպես վստահելի գործընկերոջ հետ երկար տարիների համագործակցությունն ապացուցել է դրա երկուստեք փոխշահավետությունը՝ նպաստելով մեր կառույցների առջև դրված բարդ ու պատասխանատու նպատակների իրագործմանը, աշխատանքների արդյունավետության բարձրացմանը, ծառացած խնդիրների լուծմանն ու մարտահրավերների հաղթահարմանը:

Լիահույս ենք, որ համագործակցությունը շարունակական է լինելու և ամուր հիմքեր է ձևավորելու իրավական պետության կերտման ճանապարհին մեր ջանքերը մեկտեղելու համար:

Եվս մեկ անգամ շնորհավորելով հոբելյանի կապակցությամբ՝ մաղթում եմ Ձեզ և ՀՀ Արդարադատության ակադեմիայի ողջ անձնակազմին՝ քաջառողջություն, հաջողություններ, անսպառ եռանդ՝ լավագույնս իրականացնելու վստահված բարձր առաքելությունը և նորանոր ձեռքբերումներ՝ ի բարօրություն մեր պետության:

Հարգանքով՝ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ